# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164, 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 1/232/4 - 24

<<25>> դեկտեմբերի 2024թ

ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս

*Պատվիրատու՝ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*Նախագծող՝ «ՕՀԱՆՅԱՆ ԻՆԴԱՍԹՐԻՉ» ՍՊԸ*

*Տնօրեն՝ Հ. ՕՀԱՆՅԱՆ*

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով ՀՀ Լոռու մարզ, Կաճաճկուտ բնակավայր, Սեդվա վանքի և ամրոցի վերականգնման և ամրակայման նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:

Նախահաշվային արժեքը կազմում է՝ **395 307.74** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:

Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:

Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան

*«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ*

*տնօրեն* *Ն. Միրեկյան*

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզ, Կաճաճկուտ բնակավայր, Սեդվա վանքի և ամրոցի վերականգնման և ամրակայման նախագծանախահաշվային փաստաթղթեր

*Պատվիրատու՝ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*Նախագծող՝ «ՕՀԱՆՅԱՆ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ*

*Տնօրեն՝ Հ. ՕՀԱՆՅԱՆ*

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվում է ՀՀ Լոռու մարզ, Կաճաճկուտ բնակավայր, Սեդվա վանքի և ամրոցի վերականգնման և ամրակայման աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսված է հետևյալ շինարարական աշխատանքների իրականացում՝ կրաբետոնե թաղի կառուցում, միաձույլ կրաբետոնե սալի կառուցում, կրաշաղախի շերտի իրականացում ամրանավորված ցանցով: Խամքարաբետոնե նախապատրաստական շերտի իրականացում, երկաթբետոնե ժապավենային հիմքի կառուցում, միաձույլ երկաթբետոնե սալի իրականացում, միաձույլ երկաթբետոնե գոտու կառուցում: Փլատակների և հողի շերտի մաքրում հեռացում, շինարարական աղբի հավաքում, բարձում և տեղափոխում: Պահպանված կանգնած հատվածների կարանախցում և ներարկում կրաշաղախով, արտաքին և ներքին պատերի շարի իրականացում կոպտատաշ բազալտից, պատերի գլխամասի պաշտպանիչ շերտի իրականացում անկանոն բազալտե սալերից կրաշաղախով: Գոյություն ունեցող պատերի կարանախցում, պարսպապատերի պատերի վերաշար կիսակոպտատաշ քարերով, մետաղական դարպասների քանդում և տեղադրում , վերամշակում և ներկում: Եկեղեցու պատերի նոր տաշ ու շարի իրականացում, պատերի քանդում և վերաշարում: Քիվերի,

**սալահատակի և ծածկասալերի նոր տաշ ու շարի իրականացում: Ներքին և արտաքին պատերի կարանախցում: Սրահի սյուների խարիսխների նոր տաշ ու շար, որմնախարիսխի քայքայված մասի նոր տաշ ու շարի իրականացում, սալահատակի կառուցում: Փայտե դռների տեղադրում:**

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով

Հաշվարկը կազմում է **395 307.74** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը **2272.65** և մեքենաների շահագործման ինդեքսը **3022.31**

Նյութերի արժեքն ընդունված է 2024թ. N **11** «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

*Տնօրեն* *Ն. Սիրեկանյան*

*Փորձագետ* *Տ. Վիրաբյան*